

ՊԱՅՄԱՆԵՐ

Իհսակը Շարք օրերը կը հրատարակուի: Բաժանորդագրութեան տեղին է Ակորեան-Սան Թիւ 15. Անկեան Գանակ չընդունուի:

ՊԱՅՄԱՆԵՐ

Տարեկան գին երեք մլն. 2. 60 Պոլսոյ եւ Կաւառաց համար (փոսթի գինը լրագրոյս վրայ) Հասին գին . . . Փր. 50 Ծանուցման տողը 3. 7ր.

Պ Ի Տ Մ Ա Կ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Նամակ ուղեւոր օրհորդս: — Տեսակը եւ ոչ թէ՛ քանակութիւնը: — Կարեւոր խորհրդածութիւն: — Միաբանական աղօթք: — Եկեղեցական կառավարութիւն: — Նամակ Պրուսայէն: — Բարակական: — Խառն լուրեր: — Ծանուցման: — Իրամական:

ՆԱՄԱԿԻ ՈՒՂԵՍԱԿԱՆ ՕՐԻՈՐԴՍ

ՆԱՄԱԿ 2ՈՐՈՐԴ

Ա Ն Պ Ա Տ Ե Հ

ԵՒ

Վ Ն Ա Ս Ա Կ Ա Ր Կ Ա Շ Կ Ա Ն Գ Ո Ւ Մ Ն Ե Ր

ՅԱՆՈՒՆ ԱՄՕԹԻՍՏՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն Տես թիւ 122)

Այդ բնութեան տէր մարդիկ՝ յայտնի է որ, ճշմարիտ համեստութեան վրայ որոշ գաղափար չունին, կամ ուրիշ խօսքով համեստութիւնը ինչ բանի մէջ կը կայանայ չեն գիտեր: Խեղճերն տեղ չընէր թէ՛ աշխարհիս մէջ ինչ ծանր չարիքներ և վնասներ ծագած են և կը ծագին այդ շինծու և կեղծ համեստութեան երեսէն, երիտասարդաց և օրիորդաց մէջ տեղը ազատ բայց անմեղ և մարդավայել հաղորդակցութիւնը խափանել կամ արգիլելը սեղմեալ և անտեղեակ մտաց գործ է: Օրիորդք պէտք է ազատ ըլլան տեսակցիլ և կենցաղավարիլ ուզած և ընտրած բարեկամ երիտասարդներուն հետ, բայց առաքինական պարզութեամբ և բաց սրբտուրութեամբ: Անոնց զգուշանալու կէտք այն է որ, այն ազատութիւնը չարին չի գործածեն, ճշմարիտ համեստութեան կանոններուն դէմ չի մեղանշեն: Ազատ ենք բոլորով լլախ և անպարկեշտ վարմունքներ ընելու չեն: Անձնական պատուս վե՛ն նախանձ մը կըրելու են դէմքերուն վրայ: Երբ այսպէս ծանրութեամբ և վեհանձնաբար կը վարուին՝ նոյն ատենը առանց անանկ կեղծ ու պատիր քաշուելներու, ոչ մէկ ճշմարիտ կըրթեալ անձ մը պիտի մեղադրէ զանոնք կամ ծուռ մեկնէ անոնց դիտաւորութիւնը: Ընդհանրապէս՝ օրիորդաց քով իբրև նշան համեստութեան կամ անօթխածութեան խել մը անպատեհ շարժումներ և քմակիւններ կան, որպէս թէ կը քաշուին և չեն ուզեր անմեղ և օրինաւոր յարաբերութիւնները: Բայց ո՞վ կը հաւատայ ստոր, ամէն մարդ գիտէ որ, կեղծ է: Ի՞նչ իմաստ կայ ամենուն գիտցած բնական յոժարութիւնները չուզել կամ մերժել ձևանալուն մէջ, ինչ գործնական առաքինութիւն կայ ստոր

մէջ, միթէ այդ համեստութիւնն է: Ամէն մարդ գիտէ որ, անոնք այդ յոժարութիւնները ի բնէ ունին, անանկ որ եթէ ստոյգ հաւատան թէ անոնց բրածը կեղծ չէ, այլ ստոյգ, յայնժամ պիտի խորհին թէ անոնց մէջ բնական պակասութիւն մը կայ: Ամենևին գովելի սովորութիւն չէ այդպէս խաբէական ձևեր բանեցնելը: Նեղզամիտ ու անպարկեշտ մարդոց հետ բնաւ բարեկամութիւն ընելու չէ, բայց երբ մէկը համեստ և պարկեշտ է և կենցաղավարութեան մէջ անկեղծ ու անխտոր կը վարուի, կրնայ օրիորդ մը անոր հետ նոյնպէս պարկեշտութեամբ և համեստաբար տեսակցիլ, և ոչ որ կրնայ զինքը մեղադրել: Այն երիտասարդք որ գէշ տրամադրութեան տէր են, և դիտաւորութիւններն զգէ է, անոնցմէ հեռու փախչելու է և բնաւ երես տալու չէ: Իմ խօսքս աղէկ արամադրութեան տէր և բարի բնաւորութիւն ունեցող մարդոց համար է: Ես այս խրատական ակնարկութիւնները կըրեն՝ առանց մանրամասն բացատրութիւններ ընելու, սակայն պէտք չէ խօսքս սիւս հասկնալ: Իմ գրածներս այնու թելութեամբ է որ՝ ընթերցողք խելահաս օրիորդներ են և խօսքերուս գործութիւնը աղէկ կըրնեն, և կը հասկնան ինչ բոլոր կուզեն: Թերևս ոմանք անանկ պիտի առնեն թէ՛ ես բոլոր կուզեմ որ, օրիորդք անխտոր ամէն երիտասարդաց հետ տեսակցելու են: Գիտեմ շատ ծնողք պիտի խորհին թէ՛ այս երկրին վրայ զրած ժամանակս, զըչիս քիչ մը զգուշ ըլլամ, և բանը անելի պարագայիս և մանրամասն բացատրեմ, բայց ես քաջ գիտեմ որ, այս բնածններս հասկնալ և ըմբռնելու չափ դատում և խոհականութիւն չունեցող օրիորդք՝ որ այսքան խոհական ոճով խօսեցայ, ուրիշ ինչ ոճով ալ պարզեմ և բացատրեմ, տակաւին բնաւ բան մը չի պիտի հասկնան և հետևապէս անօգուտ պիտի ըլլայ:

Պարկեշտ և անբասիր վարուց աղբիւրը սիրուն է: Անպատեհ կաշկանդումները և չափազանց սեղմունքները՝ կըրթեալ և առաքինի սրտին պաշտօնը կարող չեն կատարել: Այն օրիորդք՝ որ չունին սրտի և մտաց առաքինական ողջամիտ դատարակութիւն, իմ խրատներուս գործութիւնը կարող չեն ըմբռնել, և ոչ իսկ կրնան խորձադրել զանոնք: Իմ խօսքերս մտքով զարգացելոց ուղեւոր են, որոնք վստահ են թէ առաքինութեան նուիրեալ մարդը սիրտեր կը տածեն, և իրենց բոլոր խորհուրդները և բաղձանքները անբիծ և անարատ են: Եւ գիտեմ թէ՛ որչափ ժամանակ անոնք այս վիճակին մէջ մնան, անոնց համար վտանգ չկայ, վախը այս դիրքէն իյնալուն մէջ է: Անոնք Աստուծոյ Բանին լոյսը ունին սրտերուն մէջ, որ հաւատարմութեամբ կիմացնէ իրենց, երբ համեստութիւնն արատաւորող ծուռ շարժում մը կըլլայ դէպ ի իրենց անձին: Եւ թէ որ մէկը առաջին քայլին դէմ չի դէ ասանկ ապօրէն վարմունք մը տեղի գտած ժամանակ, անանկ որ անգամ մ'ալ տեղի չի գտնէ այն վարմունքը, և տեղի տայ հորէն հորէն կրկնուելուն, կը յուսա՞ք թէ անանկին խրատ և խօսք երբեք օգուտ մը կըրնէ: Անվայել և կասկածելի վարմունքները մէկէն դիմադրելու է, և բնաւ անպարզ տալու չէ, և ան ալ ո՛ր է անձի հետ և ո՛ր է պարագայի տակ: Ահա այս է համեստութեան և անօթխածութեան տարրական կանոնը: Ես կըրեսմ թէ այս սահմանը արթնութեամբ հսկելէն վերջը, ալ անկէ անդին վտանգ չկայ, թող օրիորդք ազատօրէն և բաց սրտով խօսին և տեսակցին երիտասարդաց հետ, ինքզինքը գիտցող կըրթեալ և առաքինի օրիորդի մը համար ամենևին վտանգ չկայ, որ երբեք իր համեստութիւնը արատաւորի, կամ մէկը համարձակի այդպէս փորձ մը ընել: Եստ ծնողք՝ հոգինին կը դողայ, կը վախնան աղջիկներն աչքերուն առջևէն հեռացնելու, որ մի գուցէ մէկուն թակարդը իյնան: Երիտալը ես այդ բանը չեմ կրնար ընել, կամ մըչնամ մինչև անգամ այդպիսի գաղափար մը յայտնել, որ ես չեմ վստահիր աղջիկս տեսութեան հեռացնել, որով կը դաւանիմ թէ՛ ես շնորհօքն Աստուծոյ զայն կըրթած և դատարակած չեմ, որպէս զի կարեւայ իւր անձնական պատուոյն ինքն անձամբ պաշտպան կենալ:

Ես հաստատ կը հաւատամ որ, եթէ անգամ մը այն քստմեղի գաղափարը և սխալ ըմբռնումը՝ թէ մարդիկ իրական սեռին բնական թշնամիներն են, և թէ օրիորդք զգուշանալու են անոնցմէ և դիմակի տակ կեղծ ու պատիր շարժումներով վարուելու են երկիմարդոց հետ, որպէս զի առանց իրենց համեստութիւնը արատաւորելու յաջողին անոնց սէրը պատրանք գրաւել, մէջտեղէն վերնալու ըլլայ, և երկու սեռին մէջ ազատ և մարդավայել ընկերակցութիւն և հաղորդակցութիւն ըլլայ, երկու կողման ալ մեծ օրհնութիւն պիտի ըլլայ, — թէ արական սեռը բարոյապէս շատ պիտի բարւոյնի, և թէ իրական սեռին վիճակն ալ կատարեալ ապահովութեան մէջ պիտի ըլլայ: — Այն արդի տիրող փոխադարձ վախերը պիտի փարատին: Ուրիշ կէտ մ'ալ կայ, որ տեղն է հոս նշանակել, քանզի քիչ շատ կապակցեալ է այս խնդրոյն հետ: Եստ անգամ օրիորդք առանց զգալու կը փորձուին բարեկամութիւններն մասնաւորել, և այն անձանց հետ մարդկօրէն և քաղաքավարութեամբ վարուիլ, որ հաւանութիւն կզգան իրենց կենակից ունենալու: Հոգ չեն ընէր բնաւ թէ ուրիշ ամուրի անձինք ինչ կը խորհին կամ ինտոր համարում կունենան իրենց վրայ, այլ ամէն ճիգ կը թափեն անոնց միայն հասնելի ըլլալ, անոնց բարի համարումը ստանալ:

Անոնք իրենք իրենց դատումներ կըրեն որ երիտասարդի որ պատահին, զորս չափազանց վեր կառնեն և կը գովեն, և զորս կանգունեն և կարհամարհեն, բայց ասանկ ընելով, իրենք ամենէն ալ կարհամարհուին, և հետևանքը գէշ կըլլայ իրենց:

Արդ այս ընթացքը շատ գէշ է, անվայել և վնասակար, և մեծ արատ է աղջկան մը վրայ: Մարդոց թշնամանքն ու անտեղութիւնը իր վրայ բերելու ասկէ հզօր միջոց չի կրնար բանեցնել: Ամէն երիտասարդի սըրտին մէջ բնական կիրք մի է, որ կը բաղձայ ամենուն սէրն ու հաւանութիւնը վայելել, կուզէ ամենէն գովեալ ընդունիլ, և երբ կը տեսնէ թէ օրիորդ մը զինքը կատէ և նուստ համարում ունի իր վրայ, չի կրնար ինքն ալ զայն չատել ու չի թշնամանել, ասանկ պարագայի տակ հակակրօնութիւնը բնական է: Անշուշտ ամէն երիտասարդ շատ մեծ հանութիւն կզգայ և շատ կը միթարուի, և միանգամայն ազգու քաշալերութիւն մի է իրեն, երբ կը տեսնէ թէ իրեն ծանօթ բարեկամ օրիորդք շատ կը յարգեն զինքը և բարձր համարում ունին իր վրայ, որովհետև իր ապագայ կենաց երջանկութեան ամենաբաղքը յոյսերը անոնց հետ կապուած է, և անոնց համարմանը մէջ տեղ մը բունելը մեծ փառք է իրեն: Ուստի առանց բանաւոր պատճառի այս բարձր միթարութեան գրկուիլը, հարկաւ ծանր վէրք մը կըլլայ իրեն, որ դիւրաւ չի բուժուիր:

(Շարունակելի.)

ՏԵՍԱԿ ԵՒ ՈՉ ԹԻ՛ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ինքնայայտ իրողութիւն մի է որ, բաներուն արժէքը իրենց քանակութենէն կախեալ չէ, այլ տեսակէն կամ որակութենէն: Կրնայ անանկ պարագայ ըլլալ որ մէկ կըրթեալ մարդ մը հաղաբներով անկիրթ մարդու գործը ընէ: Մէկ քաջ տակին հաղաբ աւելի արժէք և զօրութիւն ունի քան թէ հաղաբներով քաջ երկաթը: Մի քանի

անդամանդի քարերը կրնան քարաշէն հսկայ չէնք մը կանգնել :

Մեծն Աղէքսանդր քառասուն հազար Յոյն ետին ձգած անցուկ կիրճի մը բերանը Պարսից կէս միլիոնէ բաղկացեալ պատերազմի վարժ բանակը փոշիի պէս ցրուեց և մէջէն անցաւ, միայն 30 ձի և 400 մարդ կորսընցնելով : Անտի անցաւ Պարսկաստան գնաց և այն հզօր կայսրութիւնը հիմնայտակ ըրաւ, և նոյն մարդոցմով գրեթէ բոլոր կիսագունդը ոտքին տակը առաւ, տեղ չի մնաց արշաւեց՝ համարէ թէ առանց նշանաւոր ընդգիմութիւն կրեալ : Ի՞նչ էր այս նշանաւոր յաջողութեան գաղտնիքը : Ձեխութիւնն ու անառակութիւնը բոլոր այն կողմերը այն ստախճան զօրացած և ընդհանրացած էր որ բոլոր ժողովուրդը ուժէ ինկած և յետին տկարութեան մէջ էր, և հետևապէս վրանին լքում և վհատութիւն եկած էր, զինուորական փափկասուն աղջիկներէ կամ պառաւ կնիկներէ աւելի առաւելութիւն մը չունէին, անանկ որ իրենց ահագին և ստուար բանակը Աղէքսանդրի ընտիր մարդոցը առաջը ոչինչ էր :

Ընդհանրապէս մարդիկ այս կարևոր իրողութիւնը անտես ընելով, ժողովրդեան բարոյական զօրութիւնը հաշուոյ չեն առնել, կը կարծեն թէ արժէքը թիւին վրայ է, ժողովրդեան մը իրական ուժը կը թուութեան և մաքուր բարոյականութեան մէջ է, բոլոր ուրիշ հանգամանքները երկրորդական են :

Մեղի կերևայ թէ Գաղղիոյ վերջին ամօթալի պարտութեան գաղտնիքն ալ այս կէտին մէջն էր, նորա նիւթական զօրութիւնը ամէն ինչ ալ որ էր, սա անժխտելի ճշմարտութիւն մի է որ, բարոյական զօրութիւն գրեթէ բնաւ չէր մնացած :

ԿՐԵՆԻՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

Մարդս կը ճգնի արտաքին աշխարհի սքանչելեացը խելք հասցնել, մինչդեռ բուն իր անձին մէջ եղածներուն կարող չէ եղած վերահասու լինել : Արտաքին աշխարհին մէջ որոնած զարմանալիքներն սրբէն բուն մենք մեր անձին մէջ կը կրենք :

Ինչպէս որ վարդը և բոլոր անուշահոտ ծաղիկները գարնան յորդ անձրևներուն տակ կը սնանին և կը բացուին, անանկ ալ ճշմարիտ սէրը ձախողութեանց և դժբաղդութեանց բուն հոսանքին տակ աւելի կը զօրանայ և կը սնանի :

Մահը ինքնին իր մէջ ահարկութիւն մը չունի, այլ կեանքն է որ զայն այնքան ահարկու կընէ :

Տիեզերաց մէջ չկայ առարկայ մը որ երկրիս չափ հեռու եղած ըլլայ երկինքէն, և նոյնպէս՝ չկայ առարկայ մը որ երկինքին չափ մօտ ըլլայ երկրիս :

Հեռի պահէ անձը չարութիւն գործելէ, և նայէ որ փորձութեան մէջ չկնաս, որովհետև անիկա սոսկ ջուրը լինալ չի նմանիր, այլ ջուրին մէջ պառկել է որ կը խեղդէ զմարդ :

Թէ որ զուկիդ ապագան խորհիլ գուն այսօր անհոգութեամբ զանց

կրնես, նա վաղը երբ մեծնայ քեզ բունի պիտի հարկադրէ ցաւօր և ողբով մտածել :

Այն որ իր զուակը մանկութենէ չի վարժէր անմեղ վաստակի մը տէր ըլլալու, կը թողու որ երբ մեծնայ ընկերութեան կամ բեռ կամ անէծք ըլլայ, որովհետև կամ պիտի մուրայ կամ պիտի գողնայ :

« Ամենէն շահաւոր դրամուսնը, որն է, » հարցուց տղայ մը իւր հօրը : « Ուսանիլը », պատասխանեց հայրը :

Գործք մը դեռ չըրած կանխադոյն լաւ մը մտածէ, մի գուցէ ըրածիդ վրայ վերջը գըլլաս : Փորձով տեսնուած է որ յանպատրաստից եղած դործողութիւնները, յանպատրաստից խօսուած ճառերուն պէս խեղճ բաներ են :

Հարուստ մարդիկ անանկ ծանր հոգեր և դառն մտածանքութիւններ ունին, որ աղքատ մարդուն լիտքէն անգամ չեն անցնիր :

Ամենէն զօրաւոր մարդիկ շատ անգամ կը վարանին իրենց կարողութեանը վրայ, սակայն ամենէն տկար անձը խորհուրդ անգամ չունի այդ բանին վրայ :

ՄԻՍՏՐԱՆՈՒԹՅԱՆ ԱՂՔՈՒՄ

Ինչպէս որ ծանուցեալ էր, անցեալ Կիրակի օր Լանկայի Աղօթարանը միաբանական աղօթից ժողովուրդը զանազան օրէք ժամ մը ետքը, ուր ներկայ էին արք և կանայք երեք հարիւրէն աւելի անձինք : Արդարև կարի ուրախառիթ տեսարան մի էր, տեսնել այսչափ հաւատացեալ միաբան հաւաքումը, որք եկած էին աստուածահասոյ վեհ նպատակի մը մը համար եռանդագին աղերսներով շնորհաց Հայրը թախանձել : Նոքա միանական հառաչանք կը թախանձէին շնորհաց և ողորմութեան Հայրը, որ ողորմի մեղ և հեղու իր Հոգին մեր թմբած սրտերուն վրայ, որպէս զի շարժինք և սթափինք մեր վրայ տիրող հոգևոր անդալուստեան և հակայ քայլ առնենք աստուածապաշտութեան ընդարձակ ասպարէզին վրայ, մեր Սուրբ ուխտին փառաւոր դաւանանքը գործըով վայելեցնենք մեր վարուց ու բարուցը մէջ : Աղօթք և դոհաբանական երգեր մատուցուելէն զինի, նախ Պատ. Ա. Եւտիմ Կոստանդեան ուղերձ մը ըրաւ, ուր աղբու ոճով բացատրեց թէ մարդուս հոգին որչափ պատուական է որ Աստուածորդին կը փնտռէ զանի, կը կենայ նորա սրտին դրանը առաջը, և մեղմ կերպով կրկին և կրկին կը բախէ զայն, որպէս զի հոն մտնէ և օթեանի անոր մէջ : Եւ ցուցուց թէ ինչ անուր տամարութիւն է անոր դէմ ականջ դոցել և անտարբեր մնալ :

Յետոյ Պատ. Ս. Իւթիւճիան աղօթք մատոյց : Եւ Պատ. Կ. Գաբրիէլեան շարունակեց յիշեալ նիւթը և ցուցուց թէ մեր սիրտերուն դուռները ի ընէ ամէն բանի համար բաց են, բայց միայն զՔրիստոս ընդունելու համար գոց են :

Պատ. Մ. Քրիստոսիան փոքր Ասիոյ

սովեալ տառապելոց օգնելու համար յորդորներ ըրաւ, և ծանոյց նոյն նըպատակաւ եկեղեցւոյ կողմանէ եղած արամադրութիւնը :

Եւ վերջին փառաբանութիւնը երգուելով, օրհնութեան մակթանքը տրուեցաւ :

ԵԿԵՂԵՑՍԿԱՆ ԿԱՌԱՎՈՐՈՒԹԻՒՆ

... Խմբագիր :

Օրուան խնդիր է եղած Տաճկաստանու եկեղեցեաց համար, կառավարութեանց ձևեր ու եղանակներ, որոյ համար շատ գրիչներ երկայն և իմաստալից յօդուածներ հրատարակեցին Պատուական Դիտակայ և Աւետարների մէջ : Կ'ներուի արդեօք եթէ հետեւեալ համառօտ դիտողութիւնս հրատարակելիք խնդրեմ :

Աւետարների այս տարւոյ 46^{րդ} թուով, Վ. Գրիգոր Գեորգեան ստորագրութեամբ յօդուած մը կարդացի, յօդուածին վերջի մասը կ'փափաքիմ հոս կրկնել :

« Երբ բան մը ընտելան ծոյլին մէջ իրօք գոյութիւն կ'առնէ, կ'ըսէ յիշեալ Մեծ. նամակագիրն. բնութիւնն անոր յարմար ձև մը կ'ուտայ : Այսպէս Քրիստոսեութիւն կոչուած բանը ուր որ իրօք գոյութիւն և կենդանութիւն կ'առնէ անհատի, դերագաստանի, ժողովուրդի կամ ազգի մէջ, արտաքին ձևն անոր ինքնին կու գայ : ... Ինչպէս ուրեմն մեր Աւետարանական եկեղեցիք այսքան երկարօրէն թղթակցին ... դաւաթին և անտիկն ներսիդին մարքելու միջոցներուն թող դիմեն, այս բանով դրազին, այս բանը խնդրեն աղօթքով և յարատե ապաշխարութեամբ երբ Աստուած իւր երկնառաք օրհնութիւնովը ներսը կը մարքէ, դուրսին մարքուելը հարկաւ կը հետեւի » :

Ճիշդ այս է իմ համոզումս ալ, և կը ցաւիմ որ շատ գրիչներ պարապ տեղ կը վիճաբանին, պարապ տեղ ժամավաճառութիւն կ'ընեն : Ի՞նչ է շատ մը նամակագրաց պաշտպանած սկզբունքը, ոմանք երկրակամութիւն ոմանք ժողովականութիւն կը պաշտպանեն, իսկ այս օրերս Դիտակայ մէջ նամակագիրն ալ, Պր. Պողիկարպոս, այլ դուշակութիւն մը կընէ 121^{րդ} թուոյն մէջ : « Տարակոյս չկայ թէ այս վերջինները (Մէթոտիսթ) օր մը Տաճկաստանի մէջ եկեղեցիներ պիտի ունենան » կըսէ : Պր. Պողիկարպոսի այս անկասկած գուշակութիւնն ուրիշ լինելը չեմ դիտեր թէև, բայց Հոկա. 6 ամսաթուով Ամերիկայի Յիւլատէլֆիա քաղքէն բարեկամիս մէկէն ընդունած մէկ նամակիս խօսքին նայելով, շատ մը Հայազգի երիտասարդք, յԱմերիկայ Մէթոտիստներու ճեմարաններ ուսմունք և կը թուութիւն կ'առնեն : որոնցմէն մին ալ, դաւատարի, Մէթոտիստ ընկերութեան մը կողմանէ Տաճկաստան պիտի գայ երկը քարոզելու, թերևս Պր. Պողիկարպոսի ալ անկասկած գուշակութիւնն այդ պատճառներէն է :

Թող լսեն Տաճկաստանու Աւետարանական եկեղեցիք :

Պր. Պողիկարպոս տարակոյս չունի օր մը Տաճկաստանու մէջ ալ Մէթոտիստ եկեղեցիներ գտնուելուն, Ամերիկայէն ինձ եկած նամակներ, Պր. Պողիկարպոսի ըսածը կ'հաստատեն, և տակաւին պիտի կենանք անտարբեր, և միշտ օտար սովորու-

թիւնք, օտար կառավարութիւնք, օտար աղբեցութիւնք թոյլագրենք մեր եկեղեցեաց մէջ :

Հայաստանեաց Աւետարանական եկեղեցին և նորա հարազատ որդիք կը բողոքեն ատոնց դէմ : Մենք ոչ ժողովական ենք, ոչ երկրակամ ենք, ոչ Մէթոտիստ, ոչ Մկրտիչ, և ոչ այլ ու է յարանուանութիւն կամ աղանդ, մենք Հոյ ենք, Հայկայ արևուն կ'ընենք, և եմք Հայաստանեաց Աւետարանական եկեղեցիք, մեր կառավարութեան ձևն ու եղանակն Աւետարանն է, մեր սկզբունքը և հիմը Աւետարանն է, Աւետարանէն դուրս, ամէն ինչ աղէկ կառավարութիւն և ձև որ կայ, ամէն ալ մարդկային, ամէն ալ մտացածին, հետեւապէս ամէն ալ թիւր ու սխալ են, և վայ անոր որ կը մոլորի անոնց ետեւէն երթալու :

Ամէն օր կը բողոքենք, ամէն օր կը դանդատինք թէ օտարին աղբեցութեան ներքև կը ճնշուին մեր եկեղեցիները, բայց ինչ կ'ըսենք մենք ալ չենք դիտեր, ճշմարիտը խօսելով օտար մէկը երբ քաջ տեղեկութիւն ունենայ մեր բոլոր ներքին գործոց, պիտի խնդայ մեր ոյս խօսքին : Ինչպէս կը դանդատինք թէ օտար աղբեցութիւնք մեզ կը ճնշեն, և նոյն ատեն յօժարութեամբ և սիրով մեզ մէ ոմանք Մէթոտիստներու, ոմանք երկրակամաց, ոմանք ժողովականաց գիրկ կը նետեն ինքնինքնին :

Յետև, Խարայեացոց մեծ ժողովին առջև հարցուց, թէ ո՞ր պիտի պաշտեն, և անմիջապէս ըսաւ, « բայց ես ու իմ տունս Յնովան պիտի պաշտենք » : Շատ յարանուանութիւնն կը դանդատին այսօր աշխարհիս մէջ, և մեր եկեղեցիները որը որ կողեր թող ընտրեն իրենց, բայց ես Հայ մ'եմ, ես միայն ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՆ կընդունիմ, և այդ ինձ փառք ու պարծանք է :

... Խմբագրապետ, ընդունեցէք խորին յարգանացս հուռաստիքն, որով մնամ Ձերք բարեացակամ

ԻՄԵՐՈՒՆ
Ռոտտոտոյ 1874 Հոկ. 22.

ՆԱՄԱԿ ՊՐՈՒՍՍՅԵՆ

... Խմբագիր :

Հակառակխօսութիւնը աշխարհիս վերայ ամենազղուելի է, սակայն արևու լուսոյն պէս պայծառ ճշմարտութեանց կերպարանաբերութիւնը աստուածութեամբ աշխարհի հրատարակուելը տեսնալով լռելն ալ յետին վատութիւն մ'է : Արդ ես ալ պարտ անձին համարելով ճշմարտութիւնը երևան հանել ու վատ աստուածութիւնը խայտառակել, Փունջ լրագրոյն 926 թուոյն մէջ Սեպտեմբեր 30 թուականաւ քաղքէս գրուած անստորագիր նամակի մը թողովով այլ մասերը, բուն իմ դաւանած ճշմարտութեանցս դպչող կետերուն պատասխանել ստիպուեցայ, որուն ձեռ անկողնիս վրայ թերթին մէջ էջ մը շնորհակցել կը խնդրուի :

Յիշեալ նամակին մէջ ուշադրութեան արժանի կէտ մը սա է որ, Պ. նամակագիրը վատ աստուածութիւններ աշխարհիս ներկայացունելէ վերջը, վայրիկ մը մտածելով, գէթ իւր ուլ ըլլալը ծածկել խոհեմութիւն կը սեպէ. սակայն թողովով զայս, մեր բուն խնդրոյն դառնամք, Գաղթիս շրջակայները գողեր ըլլալը յիշելէ վերջը կ'աւել-

ցունէ յիշեալ նամակագիրը «Այս օրերս յիշեալ գործը գերազանցող գործերն ալ գործ տեսնալու ելեր են . առաջինները մարդուս միայն մարմնայն կը վնասեն, իսկ այս երկրորդները եկեղեցւոյ և ազգին ոգւոյն վնասել կուզեն, ասոնք բողոքականներն են . . . » Ինչ հարկ կայ արդեօք «Այս օրերս» ըսել . քանի որ բողոքականները 20—30 տարիներէ ի վեր Տէրով այգիին մէջ կը գործեն . միթէ դեռ «այս օրերս» տեսեր է նոցա այս գովելի ընթացքը . . .

Գարձեալ, «վերջին օրերս չափազանց կը ճգնին եկեղեցւոյ զաւակները անխղճարար եկեղեցւոյ գրկէն դողնալ, բայց ինչպէս վսեմ: կուսակալը մարմնայ և ընչից վնասող աւազակներէն երկիրը ազատ պահել յաջողեցաւ, այնպէս Ս. Առաջնորդը այս ազգի և եկեղեցւոյ աւազակներէ իր բոլոր վիճակին ժողովուրդը ազատ պահելու համար ամէն օրինաւոր միջոց ձեռք առած ըլլալով, բողոքականութեան որս մը յափշտակելու տեղիք տուած չէ . . . » կրտէ Պ. նամակագիրը իւր նամակին շարունակութեանը մէջ: Արդէն առաջնորդին ձեռք առած «օրինաւոր միջոց»ները ձեռք պատուական թերթին 109^{րդ}, 112^{րդ}, 117^{րդ} թիւերուն մէջ յիշուած ըլլալով, հոս կրկնել հարկ չէ. ասոնք բռնութիւն, հալածանք և սպառնալիք էին և ոչ այլ ինչ: Սակայն փոռնի նամակին մէջ այլ չորս միջոցներ յիշուած են, և այնպէս ցուցուած է, որպէս թէ «Ս. Առաջնորդը» արդէն ասոնք գործադրած և կրտսով չափ ալ յաջողած ըլլայ: «Նախ» կրտէ Պ. նամակագիրը «Ս. եկեղեցւոյ ատենաներէն հողեչափ խրտաններով և ողջամտ վարդապետութեամբ հաստատել զամենայն իր լուսաւորչական Ս. հաւատոյ մէջ, խօսելով և բացատրելով մեր Ս. եկեղեցւոյ ընդունած վարդապետութիւնները, սորվեցունելով ազգութիւնը և անոր պատմութիւնը ևն . . . » Յիշուած այս «հողեչափ խրտաններով և ողջամտ վարդապետութեամբ» արդէն բաղում պատանիք և երիտասարդք անկրօնութեան մէջ հաստատուած են. զի իւր քարոզիչ մէջ անէճք, բանադրանք և բողոքականաց անարգական անուններ տալը յաւէտ կը ըսն. և երբ իրենց ընդունած Ս. Աւետարանը ձեռք կառնուն, հոն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի «Սիրեցէք զմիմեանս» պատուէրը կը տեսնան յայնժամ կը դայթակղին, և որուն հաւտան, իրենց վարդապետին անիծանաց, թէ Քրիստոսի սէր քարոզելուն. կը շուարին և երկուքին ալ չեն հաւտար: Ահա «Ս. եկեղեցւոյ ատենաներէն տուած հողեչափ խրտանը և ողջամտ վարդապետութեանց» ձախող արդիւնքը:

«Երկրորդ» կրտէ Պ. նամակագիրը «իր վիճակին ամէն կողմերը տղայոց և տղկանց բարեկարգ վարժարաններ հաստատել, յորս և ամէն ուսմունքէ աւելի կրօն. դիտութիւնք և ազգ. պատմութիւն աւանդել տալ»: Ասի իր երկրորդ միջոց յիշած է, զոր Առաջնորդը կը գործադրէ, սակայն արդեօք իր վիճակին ո՞ր կողմերը «տղայոց և տղկանց յարակարգ վարժարաններ» կը գտնուին:

Գալով երրորդին, այսպէս կրտէ . «Միշտ բողոքած է կառավարութեան և վերջին օրերս դարձեալ բողոքեց

գաւառական վարչութեան միջոցաւ Բագրիւր ընելով, որպէս զի ուր որ չըլլայ բողոքական ժողովուրդ. հոն չը մտնայ և բողոքական քարոզիչ, առարկելով թէ ո՞ր և է կրօնի քարոզիչ մը մինչև որ իր կրօնքէն ժողովուրդը չունենայ» քաղաքական օրէնքը չներէր այն քարոզիչն քարոզել իր կրօնքէն դուրս կրօնքի մը մէջ ապրող ժողովուրդեան մը: Ի սոյն Թագրիւր խնդրած է նաև կառավարութեան, Բ. դռնէն հրահանգ մը խնդրուիլ թէ բողոքականք քաղաքի մը կամ գիւղի մը մէջ ո՞րքան անձէ բաղկանան նէ կրնան ունենալ քարոզիչ մը՝ ազգութեանը մը՝ դպրոց մը և գերեզմանատուն մը: Նորին Սրբազնութեան իւր գաւառական վարչութեան հետ Բողոքականութեան նկատմամբ այս պարագաներուն վրայօք ըրած թագրիւրն սեղական կառավարութեան առջև բողոքովն օրինաւոր տեսնուելով՝ կառավարութիւնը գրեց Բ. դրան և յոյս կայ որ քիչ օրէն մեր ազգին նպաստաւոր պատասխան մը պիտի ընդունուի: Չեմ ըսեր թէ այսպիսի թագրիւր մը տուած չէ, կրնայ ըլլալ որ տուած ըլլայ, սակայն ասոր արդէն «ազգին նպաստաւոր» պատասխան մը ընդունած ըլլալը Պ. նամակագիրին կողմանէ մոռցուած ըլլալու է, ինչպէս իրեն տէրութեան կողմանէ ըսուեցաւ որ «այդպիսի թագրիւրներ իր ձեռք չտրուին, եթէ Լուսաւորչական մը Բողոքականի մը դէմ դատուին, անձամբ դատ վարէ իւր հակառակորդին դէմ» (տես Աւետարեւր թիւ 31): Այս դարուն մէջ երբ տէրութիւնն ալ կրօնական ազատութիւնը ընդունած է, այսպիսի խնդրներ յարուցանելը այս ազատութեան դէմ մեղանշուել ըսել է: Արդ այս պատասխանատուութիւնը գործողներուն թողլով յիշած չորրորդ միջոցին՝ կ'անցնիմ, որ ոչ նուազ ծիծաղելի է քան զայստիկ:

«Այսպէս նաև երբեմն բողոքած էր կառավարութեան» արգիլել ամբիկացի քարոզչաց ոտքերը իր բոլոր վիճակէն, առարկելով թէ օսմանեան բարեխնամ տէրութիւնը ո՞ր և է ազգի համար չէ ներած օտար տէրութեանց հպատակներէ ո՞ր և է կրօնքի քարոզիչ մը իր հպատակ ժողովուրդեան կրօնք քարոզելու: Այս բողոքը որ չորս տարիներ յառաջ ըրած էր տեղական կառավարութեան և ըստ իւր բողոքին կառավարութիւնն ալ ի հարկէ Բ. դրան դրած և Ամերիկացի քարոզիչներուն իբրև օտարական մարդիկ երկրի հպատակ ժողովուրդեան կրօնք քարոզելը արգիլելու հրամանն ընդունած էր որ Ն. Սրբազնութեան բոլոր վիճակին մէջ Ամերիկացի քարոզիչ մը չորս տարիէ ի վեր է որ տեսնուած չունի, որուն համար սղգովին մեր խորին շնորհակալութիւնը յայտնենէս ետք՝ կը խոստովանիմ թէ Նորին Սրբազնութեան ձեռք առած այս ազգու միջոցները այս ազգի և եկեղեցւոյ թշնամեաց դարաններէն ազատել յաջողած է իր հօտը . . . » Պ. նամակագիրը իւր յօդուածին այս մասին մէջ ստույգութեամբ վերջին աստիճան կը հասցունէ. չորս տարի առաջ այսպիսի բողոք մը ըրած ըլլալը մեք երբէք չիմացանք, և սր աւելին է, ըստ կարծեաց նամակագիրին, այս բողոքին ներքև ինկնող Ամերիկացի Պատ. Միտիճարներն ալ այս բողոքէն հաղիւ մեղ չափ տեղեկութիւն ունին. արդ մեք

քաջ գիտելով առաջնորդին բողոքականութեան դէմ անհաշտ թշնամի ըլլալը, չեմք կարծէր որ նա այսպիսի արտօնութիւն մը ստանալէ վերջը ռուպէ մը յապաղէ, որ փոռնի պատուարժան նամակագիրն ալ մեր այս կարծիքը կը հաստատէ ըսելով «Ն. սրբազնութեան բոլոր վիճակին մէջ Ամերիկացի քարոզիչ մը չորս տարի է որ տեսնուած չունի . . . » Արդ իր յայտարար, և այս կարծեցեալ արտօնութիւնը ի գործ չդնելը, յայտնի ապացոյց մի է որ, այսպիսի հրաման մը կամ արտօնութիւն մը ընդունած չէ, և այս մասին ալ Պ. նամակագիրն հաստատածը ըլլ ստույգութիւն է և ոչ այլ ինչ և ինք ալ արդեօք բնաւ տեսած չէ քաղաքի մէջ դեռ այս օր գտնուող Ամերիկացի Միտիճարը որ եհնիճէի ձեռագրի և Սէօլէի մէջ ալ իրենց գործին ճիւղերը ունին, ինչպէս յանդրոնէր է ըսել «չորս տարիէ ի վեր տեսնուած չունի»: Արդէն Օսմանեան տէրութիւնը ասանկ հրաման կամ արտօնութիւն մը երբէք չ'տար:

Ընթերցողը թող դատեն նամակագիր պարունին ինչ աստիճանի ճշմարտութեան հետ մէկ մը ըլլալը: Եւ այդ մեղ անձանթ եղող նամակագիրն ալ եղբայրաբար կը խրատեմք որ, այսպիսի պատիւ յոյսերով թող չը ոգևորուի, ու իր երեւակայութիւնը իբր իրողութիւն աշխարհի չ'նեկայացունէ:

Մնամ . . .
Մ. ՆԱԿՈՂՍՅԱՆ
16/28 Հոկտեմբեր 1874

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ա Ն Գ Ղ Ի Ա

Այս օրերս Անգղիական լրագրաց մէջ երեւելի նիւթ մը եղած է նանաՍահիպի՝ Հնդկաստանի գաւառան և ապստամբ իշխանին ձերբակալուիլը, որ տեղի ունեցաւ Հոկտեմբեր 10ին: Այս անձը 1857ին Հնդկաստանի այն նշաւոր ապստամբութեան գլուխն անցաւ, և անթագար ու դաւաճանօրէն ջարդեց բազում Անգղիացի տիկնայք և տղաքներ: Ինքը տաղտկանալով իւր աստանդական վիճակէն, տեղացի պաշտօնատարի մը այսպէս դրած է.— «Ես 1857ի անցքերէն հետէ թշուառ աստանդական մը եղած եմ, ու ժա բողոքովն սպառեցաւ: Արդ ըստ գիրկը կիցնամ և պաշտպանութիւնը կը հայցեմ: Կեանքս ձեռքէ կուզես առ, կուզես շնորհէ» Իշխանը իսկ մը հարցուփորձեր և քննութիւն ընելէն վերջը, Հնդկաստանի Անգղիական կառավարութեան խնդրեց որ նանայի կեանքը շնորհէ իրեն, բայց առանց պայմանի կառավարութեան ձեռք տուաւ զանիկա, Հիմա նանաՍահիպ սկսած է ուրանալ ինքը բուն անձը լինելը, և քննութիւն կը ըլլայ ճշդութեամբ համար, սակայն շատ ճանչցողներ եկած վկայած են, և իշխանը երբեմն վկայած է նոյն ինքն նանաՍահիպը լինելուն համար:

Այսու ամենայնիւ դեռ վերջնապէս ստուգուած չէ բանը, կան կասկած յարուցանող պարագաներ: Անանկ կը կարծուի թէ այս դէպքին մէջ խարդաւանք մը կայ, կամ ան է որ, զինքը ձեռք տուող Միտիճարն իշխանին կողմանէ դաւաճանութիւն կամ թշնամանք մի է այդ բանտարկեալ անձին դէմ, կամ բուն ինք բանտարկեալը

Թագուն դիտուումը մը հնարեց այս բանը՝ յուսով որ այսքան տարիներ անցած է վրէժիկը թիւն չըլլար իրեն, բայց երբ տեսաւ թէ իր յուսացածին պէս չը պիտի ըլլայ, փոխեց բերանը և սկսաւ ուրանալ: Մէկ պատմութիւն մը կայ սր կը հաստատէ թէ նանա Սահիպ բաւական տարիներ հաւածական թափառելէն ետքը, քանի մը տարի առաջ անտառի մը մէջ տեսնուէ բռնուելով մեռեր է: Թէպէտեւ այս ալ վերջնապէս չի որոշեր բանը, քանզի կրնայ ըլլալ որ այդպէս սուտ լուր հանել տուած ըլլայ, որպէս զի հաւածուելէ զերծանի:

Ֆ Ի Ճ Ի

Դիտակայ ընթերցողք արդէն գիտեն որ կղզեաց այս մեծ խումբը կամ արշիպեղաքոսն՝ որ մեծ և վոքը 250 հատ են իբր երկու հարիւր հազար բնակչօք, մօտերս իւր ազատ հաւանութեամբը Բրիտանական կառավարութեան յարեցաւ և սյփմ'նոյն տէրութեան մասը կը կազմէ: Այս կղզիները որ հարաւային ովկիանոսին մէջ այրեցեալ դօտուոյ տակ կ'իջնան, խիստ բարեբեր են և կրիմանին ընդհանրապէս առողջարար: Հաղիւ տասն և հինգ կամ քսան տարի եղած է այս կղզեաց մէջ Եւրոպացւոց կամ ճերմակ մարդոց բնակութիւն հաստատելը: Տեղացիք տեսնելով ասիկա՝ կարի շուարեցան, քանզի շատ հաճոյ չէր իրենց անոնց ներկայութիւնը, թէպէտեւ բնակաց մէկ մեծ մասը արդէն ընդունած էր քրիստոնէութիւնը Անգղիական Վեսլիեան Մէթոդիստ Սոսայիթի կողմէն ընկերութեան ջանքերը, և բաւական ընտանեցած էին ճերմակներուն ընկերակցութեանը: Մեծ յոյս կայ որ այս նոր դիրքը մեծ օրհնութիւն մը ըլլայ այդ վայրի ժողովուրդոց: Անհիմն բան մը չէ յուսալ թէ ասկէ քսան և հինգ կամ յիսուն տարի ետքը անոնք քրիստոնեայ և քաղաքակրթեալ ազգ մը կազմեն:

Գ Ա Ղ Ղ Ի Ա

Այս օրերս Գաղղիա Նաբոլիոնական նոր ցիցում մը ունեցաւ: Նափոլիոն իշխանը յայտարարութիւն մը ըրաւ, սրով իբր կայսերազուն մը կայսերական դիմակը վար կառնէ, և հրապարակաւ հանրապետականութիւնը կը դաւանի իբրև արդար և ուղիւ սկզբունք, տիրապետական միապետութեան դէմ անհաշտ թշնամի կը ձևանայ, Գաղաքական իշխանութիւնը Եկեղեցականին հետ իրար շփոթելը կը դատապարտէ, — «Երկիրն ու Եկեղեցին մէկ մէկէ անջատ լինելու են, կրտէ, Մամուլը ազատ ըլլալու է, և ընդհանուր դատախարակութիւն ձրիաբար տրուելու է»: Այսոքիկ են իր դաւանած սկզբունքները. բայց չենք գիտեր թէ մարդ պիտի դանէ իր անկեղծութեանը հաւատը ընծայող, ոչ ապաքէն իւր հօրեղբոր որդին նոյն բերնով կայսերական դահը բարձրացաւ, ով կը վըստահանայ նորա այդ խոշորաբաւերուն: Բայի աստի ինքը այն նախորդ նափոլիոնի վարկն ու համբաւը չունի, ի զուր անջատեց ինքզինքը Նափոլիոնեան ընտանիքէն: Խնդրը այս է թէ՛ փառասիրութիւնը մինչև որ յաղուրդ դանէ: ամէն ձևի կը մտնէ, ամէն կերպարանք կը մտնէ, բայց անդամ

մը որ հասնի, ալ թէ որ կրնաս հե-
տը խօսէ: Սակայն այդ յաջողու-
թիւնը նախնիքի իշխանի համար չէ,
նա խաբուած է իր անձէն:

Գաղղիոյ Ֆիկօրա լրագիրը կը հաս-
տատէ թէ Ա. Նախիկեանի ժամանա-
կակից 23 հազար Գաղղիացի կան այս
օր ողջ, որոնք 80—90 տարեքնուն
մէջ են:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՍՈՎ

Քաղցեայ՝ և ևս ուրիշ ինձ ուտել:
ՄՍՏՔ. ԻԵ. 35.

Հաճութեամբ կիմանանք որ Լան-
կայի Հայ Աւետարանական Եկեղե-
ցին ամսոյս 27 ին ընդհանուր ժո-
ղով ընելով հանդանակութիւն մը բա-
յած է Փոքր Ասիոյ սովատանջ խըղ-
ճախաց և տառապելոց ըստ կարի
օգնելու համար, կամ լաւ է ըսենք,
այն մարդասիրական և առաքինական
չեղմ և գովելի ճգնաց մէջ՝ որ այս
օրուան օրս ամէն ուստեք դիւցադ-
նաբար կը յայտնուին քաղցեալ կա-
րօտելոց հաց մատակարարելու փո-
թալ, ինքն ալ մաս և բաժին ունենայ:

Այս նպատակաւ եօթը անձէ բաղ-
կայեալ Մասնաժողով մը սահմանեալ
է յիշեալ Եկեղեցւոյ կողմանէ, որոյ
անդամքն են,

- Ստեփան Աղա Մարտիրոսեան
- Յակոբ » Մարթայեան
- Գէորգ » Միրիճանեան
- Յովհաննէս » Ագտարեան
- Հճի Գաբրիէլ » Յարութեան
- Փիլիպպոս » Գարուստեան
- Փիլիպպոս » Ռափայէլեան:

Այս Մասնաժողովը իւր առաջին
ներսը ըրած է այս ԴՂ. երեկոյ, և
նախ իր մէջէն դրազիր, դանձապետ,
և նախագահ մը ընտրած է, որք են
Գ. Միրիճանեան՝ դրազիր, Յ. Մար-
թայեան՝ դանձապետ և Ս. Մար-
տիրոսեան՝ նախագահ: Ապա մասնա-
ժողովը որոշեց է, այլոց գիւմելէ առաջ
նախ ինք օրինակ տալ անձամբ, և
իւրաքանչիւր անդամ ստորագրուե-
լով, 10 Օսմանեան լիրա գոյացեց է:
Այս գումարէն զատ ամսական մ'ալ
ստորագրուել են, որ պիտի հատու-
ցանեն որչափ ժամանակ որ այս դա-
ռըն կարօտութիւնը մնայ, որոյ գու-
մարն է ընդամէնը 183 դահեկան ա-
միսը: Մասնաժողովին այս ընթացքը
մեծ իմաստութեամբ է և գովելի:

Հիմա որ ձեռնարկած է այլոց դի-
մել, կը յուսանք թէ բազումք սի-
բով և յօժարութեամբ պիտի հետե-
ւին նոցանոց օրինակին:

Անցեալ կիրակի օր Պօլսոյ Աղօթա-
րանին մէջ եղած հաւաքումէն 463
դահեկան գոյացած է:

Մասնաժողովը կը խոստանայ իր
գործողութիւնները, մուտքին և ել-
քին հաշիւները հետզհետէ հրատա-
րակել:

Լէվանդ Հէրալտ կ'ըսէ թէ՛ Բ. դու-
ռը այս անգամ չըջարեական ծանու-
ցազիր մը խրկեց բոլոր օտար Տէրու-
թեանց գեղապաններուն, որով նորէն
կը խնդրէ իւրաքանչիւրէն որ բարե-
հաճին իմաց տալ Տաճկաստանու մէջ
բացուած վարժարաններու իրենց հը-
պատակ տնօրէնութեանց որ տեղեկա-
գրով մը հաղորդեն Բ. Դրան վար-
ժարանուն մէջ գտնուած աշակեր-

տաց թիւը, և նոցանոց ներքին կա-
նոններն ու կարգադրութիւնները, և
աւանդուած ուսմունքները:

Օտէսայէն եկող վերջին շրջանաւր,
կ'ըսէ Լէվանթ, բերաւ Ռուսիոյ կայ-
սեր մեր վեհ. Սուլթանին ընծայած
ջրհանը, բայց հետը ջրհանկիրներ ալ
պիտի խրկէ որ ըսուած էր, ան ստոյգ-
չէ, միայն երկու պաշտօնեայ ընծան
բերող Ալպէրտօֆ հրամանատարին հետ
ընկերակցած են, որ դործածութեան
կերպը հոս ջրհանակրաց ուսուցանեն:
Ջրհանը շրջաւարտ չէ եղեր, այլ ձեռ-
քով կը բանի, բայց շատ մեծ քանա-
կութեամբ ջուր կը նետէ:

ՀԱՍՈՒՆԵԱՆԻ Ի ՌՈՏՈՒՐՈՅ

... Խմբագիր

Հասունեան և Հակահասունեան
խնդիրն, մայրաքաղաքի և շրջակայ
շատ քաղաքներու մէջ յուզուելէն
ղինի, կարգը եկաւ Ռոտոսոյի, որոյ
ամբողջ պատմութեան ակն յանդի-
ման պիտի տեսնուի Հասունեանց քա-
մնելի դործք, ծայրայեղ միւլեանդու-
թիւնն, դատապարտելի սրբապղծու-
թիւնը և ճիշտութեամբ մեքենայու-
թիւնը:

Տեղւոյս Պապական Հայք թուով
քիչ ժողովուրդ մ'են թէ և, բայց փայ-
տալէն եկեղեցի մը և վարդապետ ու-
նին: Այժմու վարդապետին՝ Պօլսոյ
Վերջիններուն սա բանն կրկին գովու-
թեան արժան է, որ իրենց մէջ հաս-
տատուն միութիւն պահելով, ամէն
ալ Հակահասունեան կողմն են. մինչ-
դեռ ուրիշ տեղերու ժողովուրդք՝ եր-
կուքի կ'բաժնուին, Հասունեանք և
անդի Հասունեանք:

Արդ՝ բնականաբար տարբեր և նշա-
նաւոր մեքենայութիւնք ի կիր արկա-
նել պէտք էր այս վիճակը ունեցող
ժողովուրդեան մը:

Պօլսոյ վարդապետ, տեսնելով որ
ժողովուրդեան մէջ Հասունեան կուսակ-
ցութիւն մ'յարուցանելոյ իր բոլոր ճի-
գերն ու ջանք ի թերեւ ելան, տեսնե-
լով որ տեղւոյս Պապականք տակա-
ւին անխախտ և հաստատուն կ'մնան
Արևելեան Գաղղիոյ եկեղեցւոյ, իբ-
րև հաւատարիս որդիք նորա, խնդի-
րը իր եղածին պէս կ'ներկայացնէ
Կ. Պօլսոյ Հասունեանց. որոնք անմի-
ջապէս լուր կ'ըրկին իրենց խնկարկու-
յէնքը տան ձեռ լուրէ, և տունը մէ-
կուն վարձու տայ. յանձնէ Լատինա-
կան Եկեղեցւոյն, ինքն ալ Կ. Պօլսոյ
երթայ: Կ'ըսուի թէ այս նոյն իմաս-
տով նամակ մ'ալ տեղւոյս Լատինա-
ցւոց եկել է Հասունեաններէն, որ
յիշեալ վարդապետին հարկ եղած
պաշտպանութիւնն ընեն. և Հայ Պա-
պականաց Եկեղեցին տան փոխելով,
Լատինական Եկեղեցւոյ վագրով ըլլայ:

Պատուարժան վարդապետը ամէն
այս մեքենայութիւնք խիստ յաջող
կերպիւ սուսիկ բռնակ իրաւուն կ'հա-
նէ: Հոկտ. 20. Կիրակի առաւօտեան
ժամերգութեան և պատարագէն ան-
միջապէս վերջը, զոր՝ ինչպէս կ'ըսուի,
սովորականէն ալ շուտով լինցուցել է
ժողովուրդը եկեղեցիէն ցրուելուն պէս,
արդէն պատրաստեալ քանի մ'հիւ-
սեր և որմնաքիւղներ կ'երթան եկեղե-
ցի, խորանը և այլ եկեղեցւոյ դիրք
պահող ամէն բան մեծաւ շտապաւ կը

քակեն, կ'քանդեն և եկեղեցին տան մը
կերպարանք կ'առնու: Տունը անմի-
ջապէս մէկուն վարձու տալով, պէտք
եղած գօնընառօններն ալ կ'ընին:

Պապական Հայք այս բանն իմա-
նալով, վարդապետէն բացատրութիւն
կ'պահանջեն, թէ ինչ աստիճան նուաստ
խղճի և մտքի աէր մէկն է որ եկեղե-
ցին քանդել կ'ստիպուին անամթաբար:
Յետոյ անմիջապէս կառավարութեան
բողոքագիր մը կ'տան իրենց վարդա-
պետին արարուածոց դէմ, և Հոկտ. 22
ին Կ. Պօլսոյ Արևելեան Գաղղիոյ Հա-
յոց Պատրիարքին կ'հեռագրեն բոլոր
իրողութիւնը:

Երէկ առաւօտ, վերապատուելի
վարդապետը, ամէն բան կարգի դնե-
լէն զինի. կառք կ'հեծնայ որ Մու-
րատլըի Կայարանը, անկէ Կ. Պօլսոյ եր-
թայ. բայց Պապական Հայք աս բանը
իմանալով, կառավարութեան ղինուոր-
ներու միջամտութեամբ, կառքը ետ
դարձունել կ'ուզեն որ արդէն շուկա-
լին կեդրոն տեղը եկած էր, որ այս
միջոցին Լատինաց կողմանէ քանի մը
երեւելի և պատուարժան անձինք կը
հասնին ի պաշտպանութիւն վեր, վար-
դապետին: Խնդիրը չափազանց կը
մեծնայ և մեծ խաղքութեամբ և ա-
մօթով ետ կ'դառնուին վարդապե-
տին հեծած կառքը Հիւպատոսի մը
տուն խուռն բաղմութեան մը անջլեէն:
Բայց վերջէն լուրերը թէ վարդապե-
տը կրկին փախել է ի Կ. Պօլսոյ: Պապա-
կանք այս բանն ալ կ'հեռագրեն իրենց
Պատրիարքին ի Կ. Պօլսոյ: Տեսնանք
այս գործը ինչ վախճան պիտի առնու:

... Խմբագրապետ, աւելորդ է
արդեօք հոս յիշել Հասունեանց եկե-
ղեցին քակելուն և տան ձե տակը-
նուն պատճառը: Վասնզի Հասունեանք
լաւ դիտնալով թէ բոլոր եկեղեցիներ-
ըր և Գաղղիոյնը ամեն տեղ Հակա-
հասունեանց կը յանձնուի կառավա-
րութեան կողմանէ, հետեւապէս տեղ-
ւոյս եկեղեցին ալ պապական Հայոց
յանձնուիլը ստոյգ և անխաղած է,
այդ պատճառաւ. փութացին եկեղեց-
ւոյ դիրք պահող ամէն բան Չանդա-
կատունը, շէնքին վրայ խաչը, խո-
րան ևն քակել որով կարող ըլլան ը-
սել թէ եկեղեցի չէ՛ տուն մ'է, հե-
տեւապէս կը յուսան ասով կարող լի-
նին շէնքը իրենց ձեռք պահել: Այսու
ամենայնիւ շէնք դիտար թէ ինչպէս
պիտի կարենան ատկկայքսել, մինչդեռ
բոլոր Ռոտոսոյիք պատրաստ են վը-
կայելոյ թէ 10 տարիէ ի վեր եկեղե-
ցի կը ճանչցուի, ուր ամէն կիրակի
պատարագ և ժամերգութիւն կըլլար:
Առ այժմ այսչափ, բայց կը խոս-
տանամ նոր բաներ ըլլալէն ետքը նո-
րէն ձեղի իմացնել:

Չերք բարեացակամ
ՄԻՋԲԱՆ
Ռոտոսոյոյ 1874 Հոկտ. 24

ԾԱՆՈՒՅՄՈՒՆԻՔ
ՀԱՉԱՐ ԵՒ ՄԻ
ԱՌԱԿԱԻՈՐ ԲԱՆՔ
Ի ԳԱՐԲԻԷԼ ԱՐԲԵՊԻՍՈՊՈՍԷ
ԱՅՁ ԱԶԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԱՐԱՆ

Այս գրքիկը՝ ինչպէս որ անուն
ալ կը ցուցնէ, հազար եւ մէկ
հասարակաց փոճաւորիւններէն
խաղալ իմաստից առակներ կը

պարունակէ, որ մեծաւ մասամբ
աւետուն ընկալի եւ, սակայն կան
պիսի ասեւր ալ մասնաւոր գաւա-
նական առակներ են որ քէն նոր
բայց կարն զուարեալի եւ օգտակար:

Գին թղթակաղմի	2 Քրանք
» Կաղմեալ	3 »
» Կաշեկաղմ	3 1/2 »

Կեդրոնացեալին է գրասուն Փարի-
զու, Յակոբեան խան, քիւ 13 ի
Չագմագըրլար եօզուու:

Եւ ի գրասուն Պաղսատար աղայի
Մրայեան Մէրհան չարէի քիւ 29:

Ն Ո Ր
Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն
Գ Ո Ր Ծ Ն Ա Կ Ս Ե
Յ Օ Ր Ի Ն Ե Ա Յ
Ա. Ա. ՍՈՒՐԵՆԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԱՐԱՆ
1874

Այս Գործնական Գերականութեան
ուսուցանելու մեթոտը բոլորովին նոր
է, և մինչև ցարդ հրատարակուածնե-
րուն վրայ սա առաւելութիւններն
ունի, որ հեղինակը՝ ինչպէս յառաջա-
բանին մէջ կըսէ, փորձառութեամբ
կատարելագործած է իւր դրութիւնը:
Ասիկց զատ մէջը դրուած բաղմութիւ
հրահանգաց մեծ մասը Ս. Գրքէն
քաղուած է, որով ուսանողը չեն
կարօտիր լուծման և թարգմանու-
թեան համար ալ ուրիշ դասագիրք
գործածելու:

Աղդ. վարժարանաց պատուարժան
տեսուչներուն և դասատուաց ուշադ-
րութիւնը կը հրաւիրենք այս կարեւոր
դասագրքին վրայ:

Կը ծախուի Հայ գրալուծառաց քով,
և մասնաւորապէս Արամեան դրա-
տունն ու Մէրճանը Պաղտատար աղա-
յին գրալուծառացոցը. գին մէկ ու
կէս փրանք: Շատ գնողներու համար
զեղչ կըլլայ:

Գ Ր Ա Մ Ա Կ Ա Ն

ԸՆԹԱՅՔ ԱՐԴԵՊՈՍ

	Նոյնիւր. Յ
Ընդ. Պարտ. Արժ. բաց	49.16
բարձր գին	49.18
ցած " "	49.15
Բուժելի Արժ.	Յր. 125 1/2
" " "	" "
Փոխառ. 69ի	272
63ի	533
65ի	547
Սօսիթիէ ժէնէրալ Լ. Ս.	7.25
Բրէտի Օսթ-Թիւրք " "	" "
Գանձատուն 1852ի " "	" "
Սօսիթիէ Օթոման " "	" "
Պանք տը Բոսնի " "	" "
Բրէտի ժէնէրալ Լ. Ս.	41.20
Պանք վերսի " "	" "
Թրամիլէյ " "	4.70
Փոխակցութիւն Լոնտ. եւսմ.	109
" Բարիզ " "	25.10
ԸՆԹԱՅՔ ԳՐԱՄՈՅ	
Օսմ ոսկին 100 դր. Կաշուով	դր. ֆրց.
Անգլ. ոսկի	110.00
Գաղ. " "	87.18
Բօլ. " "	89.10
Բրէտից " "	51.16
Ճերմակ մէճիս տարբ.	104.20
Հինգնոց " "	104.26
Մէթակթ " "	104.58
Պրինձ " "	128.00

ՏԵՐ ԵՒ ՏԵՕՐԻՆ Խ. Հ. ՄԻՄՈՆ ԻԿՓԻՆԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԱՐԱՆ
Կ. ՊՈԼԻՍ
Չագմագըրլար փող. Ակոբեան խան Թ. 15